ՀՀ ԿԳՄՄՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

«16» 02 2024թ.

(ստորագրություն)

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Ռեսուրսների ժամանակին բաշխելու մեխանիզմները և ընթացակարգերը

1. Ընդհանուր դրույթներ

Ընթացակարգի ռազմավարական նպատակն է քոլեջի ֆինանսական ռեսուրսների կառավարման և բաշխման կայուն համակարգի ստեղծումը:

Ընթացակարգի խնդիրներն են

- Ֆինանսների բաշխման համակարգի կատարելագործում,
- ֆինանսական ռեսուրսների և միջոցների արդյունավետ օգտագործման ապահովում,
- ֆինանսատնտեսական մեխանիզմի ստեղծում և կատարելագործում, որը կապահովի Քոլեջի ֆինանսական ռեսուրսների հստակ և ճիշտ բաշխումը՝ ըստ ռազմավարական ուղղությունների,
- ֆինանսական միջոցների օգտագործման և արդյունավետության բարձրացում:

Քոլեջի ռեսուրսների պլանավորման և բաշխման ընթացակարգը ներառում է Քոլեջի զարգացման հետևյալ սկզբունքները

- ֆինանսական ռեսուրսների ամբողջական կիրառում,
- բյուջետային գործընթացի թափանցիկություն,
- ռեսուրսների պլանավորում և բաշխում,
- ֆինանսական գործընթացների իրականացում՝ ելնելով քոլեջի ռազմավարությունից
- հիմնական բյուջեի փոփոխություն՝ գործունեության ծավալի փոփոխությունից:

2. Ընթացակարգի նկարագրություն

2.1 Ռազմավարական պլանավորում

- Ֆինանսական ռեսուրսների բաշխումը սկսվում է ռազմավարական պլանավորումից՝ հաշվի առնելով Քոլեջի զարգացման սահմանված նպատակները:
- Նպատակների իրականացման համար անհրաժեշտ է ձեռք բերել համապատասխան ռեսուրսներ:
- Քոլեջի ֆինանսական ռեսուրսների ապահովումը իրականացվում է քայլերի հաջորդականությամբ՝
  - ✓ Նախնական բյուջեի պլանի կազմում պատասխանատու անձանց կողմից,
  - ✓ ֆինանսկան ռեսուրսների առաջնային ուղղությունների որոշում,
  - ✓ բյուջեի հաստատում և իրականացում,
  - ✓ վերահսկում և թերությունների վերացում:

Բյուջեի կազմումը կարևոր գործընթաց է: Ֆինանսների պլանավորման համար պատասխանատու ստորաբաժանումը կազմում է նախնական բյուջեն և ներկայացնում հաստատման:

Բյուջեն կազմվում է տարեկան կտրվածքով և ներկայացվում է քոլեջի կառավարման խորհրդին՝ քննարկման և հաստատման

Բյուջեի փաթեթը կազմվում է գլխավոր հաշվապահի կողմից:

Բյուջեն կազմվում է ըստ համապատասխան ձևանմուշի:

2.2 Քոլեջի ֆինանսական ռեսուրսների բաշխում

- Ֆինանսկան ռեսուրսների բաշխումը իրականացվում է նախապես կայացած որոշումների հիման վրա:
- Բաշխման պլանը ներառում է հստակ ֆինանսական ռեսուրսները, իրականացման ռազմավարական ուղղությունները, բյուջեի իրականացման ժամկետները:

2.3 Ֆինանսական ռեսուրսների կառավարում և վերլուծություն

Հիմնական ուղղությունների շրջանակները՝

- Ֆինանսա-տնտեսական վիճակի վերլուծություն և գնահատում,
- ֆինանսական գործունեության պլանավորում և ֆինանսական միջոցների բաշխում,
- Ֆինանսների բաշխման վերահսկում:
- Ֆինանսա-տնտեսական վիճակի վերլուծությունը և գնահատումը ներառում է Քոլեջի եկամուտների և ծախսերի ընդհանուր և մասնակի վերլուծությունը բյուջետային և արտաբյուջետային, ֆինանսական վիճակի գնահատում՝ ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման համար:

3. Ընթացակարգի նշանակությունը և կիրառման ոլորտը

Սույն ընթացակարգը սահմանում է քոլեջի ռեսուրսների բաշխման կարգը և մեխանիզմները:

Սույն ընթացակարգի պահանջները տարածվում են Քոլեջի հաշվապահության և այլ կառուցվածքային ստորաբաժանումների վրա, որոնք կապված են ֆինանսական ռեսուրսների կառավարման հետ:

Քոլեջի ռեսուրսների բաշխման ընթացակարգը ներառում է Քոլեջի զարգացման հետևյալ սկզբունքները՝

- Ռեսուրսների կառավարումը ամբողջությամբ,
- ռեսուրսների պլանավորումը և բաշխումը,
- բաշխման գործընթացի իրականացումը՝ քոլեջի առաքելությունից ելնելով,
- Ֆինանսների կառավարման բաշխվածությունը պատասխանատուների միջև,
- հիմնական բյուջեի փոփոխությունը գործունեության արդյունքների հիման վրա,
- Ֆինանսական ռեսուրսների անհրաժեշտությունը կրթական գործընթացի նորմալ պայմանների ստեղծման համար,
- Ֆինանսական ռեսուրսների միջոցով մնացած բոլոր ռեսուրսների կարգավորումը:

4.Քոլեջի ֆինանսների բաշխման մեխանիզմը

4.1 Քոլեջի ֆինանսական կառուցվածքը որոշում է Քոլեջի ֆինանսական ռեսուրսների ձևավորման, օգտագործման կարգը, ինչպես նաև պատասխանատվությունների և իրավասությունների բաշխումը՝ ընդհանուր ֆինանսական արդյունքների ձեռք բերման համար:

4.2 Ֆինանսական կառուցվածքը անհրաժեշտ է եկամուտների և ծախսերի ցուցանիշների առավել հստակ որոշման համար:

4.3 Քոլեջի ֆինանսական մեխանիզմը ֆինանսների կառավարման համակարգն է՝ որպես դրամական, նյութական, ոչ նյութական խթանիչների համախումբ, որոնց ռացիոնալ ներառումը ստեղծում է ֆինանսական քաղաքականության իրականացման հիմք:

4.4 Ֆինանսական մեխանիզմը ֆինանսական քաղաքականության բաղադրիչ է, որը արձագանքում է Քոլեջի ֆինանսական վիճակին:

4.5 Ֆինանսական մեխանիզմը Քոլեջի գործունեության կատարելագործման կարևորագույն տարրն է։

Ֆինասկան մեխանիզմի ձևավորման սկզբունքներն են՝

- Քոլեջի տնտեսական հարաբերությունների համակարգի, նպատակների և խնդիրների իրականացման ամբողջականության ապահովումը։
- Ամբողջական համապատասխանությունը Քոլեջի ֆինանսական քաղաքականության պահանջներին։